ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«08» դեկտեմբերի 2021 թ. № 02/03.5/6813-2021

«ՄՈՎՍԵՍՅԱՆ» ՍՊԸ-ի ՏՆՕՐԵՆ
Ա. ՕՀԱՆՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ,ՊՈՒՇԿԻՆԻ 52-8/2
Էլ. փոստ computerland@mail.ru

Հարգելի՛ տիկին Օհանյան,

Հայտնում ենք Ձեզ, որ Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Մովսեսյան» ՍՊԸ-ի միջև 14.09.2021թ-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-21/85-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Մովսեսյան» ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները: Մասնավորապես, պայմանագրով ընկերությունը պարտավոր է մատակարարել տոներային քարթրիջներ, սակայն մատակարարված քարթրիջները համապատասխան տպիչ սարքի մեջ տեղադրելուց հետո չեն աշխատել:

Սույն թվականի սեպտեմբերի 28-ին կնքվել է ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման համաձայնագիր, և ապրանքի մատակարարման հավելյալ ժամկետ է սահմանվել մինչև 2021թ. հոկտեմբերի 26-ը: Ընկերությունը նշված ժամկետում ևս, մինչև օրս տվյալ տպիչին համապատասխան քարթրիջներ չի մատակարարել:

Համաձայն պայմանագրի 2.1.7 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ Նախարարությունը միակողմանի լուծում է ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-21/85-1 ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացրած որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1), համաձայն որակավորման ապահովման 1.4 կետի և պայմանագրի ապահովման 1.6 կետի, կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Ամերիաբանկ» ՓԲԸ ՀՀ ՖՆ գործառնական վարչության հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Մովսեսյան» ՍՊԸ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Invalid signature

X

ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 ԼԻԼԻԹ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Կատարող՝ Ֆինանսատնտեսական
վարչության
գնումների կազմակերպման բաժին
գլխավոր մասնագետ՝ Նարինե Փարսադանյան
Հեռ՝. 012 31 77 22